Արձանագրություն N 2
Առողջապահության նախարարության 2019 թվականի կարիքների համար անհրաժեշտ ցանցային, համացանցային և ներքին ծառայողական կայքի համակարգչային ծրագրային փաթեթների (կենտրոնական դիսպետչերական ղեկավարման համակարգի) սպասարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով «ՀՀ ԱՆ ԷԱՃԾՁԲ-2019/3» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան «07» «Դեկտեմբեր» 2018թ.
ժամը 14:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ Ծ. Սարգսյան
Հանձնաժողովի անդամներ Մ.Մխիթարյան, Հ.Սարգսյան

Հանձնաժողովի քարտուղար Հ.Մնացականյան

1. Ընթացակարգի հայտերի բացման մասին

(Ծ.Սարգսյան)

Ընդունել ի գիտություն, որ 27.11.18թ. հրապարակվել է հրավեր eauction.armeps համակարգում: Հայտերի ներկայացման վերջնաժամկետը՝ 05.12.18թ., հակադարձ աճուրդ (հայտերի բացումը) տեղի է ունեցել 2018 թվականի դեկտեմբերի 7-ին ժամը 10:00-ին:

Հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	Մասնակցի անվանում	Կազմակերպության էլ. հասցե	Կազմակերպության ՀՎՀՀ
1	«Լոկատոր» ՓԲԸ	sevak.minasyan@locator.am	00095651
2	«Դավթյան» ՍՊԸ	info@toolbox.am	07618736

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

(Ծ.Սարգսյան)

Մասնակիցների կողմից ներկայացված ծրարերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Տվյալներ՝ ծրարների կազմման և ներկայացման հրավերի պահանջներին համապատասխանության մասին

(Ծ.Սարգսյան)

Մասնակիցների կողմից ներկայացված ծրարները կազմված են հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. Մասնակիցների առաջարկած գների մասին

(Ծ.Սարգսյան)

Կազմակերպությունների կողմից ներկայացված գնային առաջարկները ներկայացվում է ստորև.

ՀՀ դրամ

Կազմակերպության անվանում	Նախնական առաջարկ			Վերջնական առաջարկ		
	Արժեք	ԱԱՀ	Գին	Արժեք	ԱԱՀ	Գին
«Լոկատոր» ՓԲԸ	11,958,333.34	2,391,666.66	14,350,000	11,958,333.34	2,391,666.66	14,350,000
«Դավթյան» ՍՊԸ	36,000,000	7,2000,000	43,200,000	36,000,000	7,2000,000	43,200,000

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

5. Հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

(Ծ.Սարգսյան)

Հարցումներ չեն եղել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

6. Առաջին տեղերն զբաղեցրած մասնակիցներին որոշելու մասին

(Ծ.Սարգսյան)

«ՀՀ ԱՆ ԷԱՃԾՁԲ-2019/3» ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Լոկատոր» ՓԲԸ-ն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

7.Առաջին տեղը զբաղեցրած մասնակցին որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի ենթակետերով նախատեսված փաստաթղթերի ներկայացման մասին

(Ծ.Սարգսյան)

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 19-րդ կետի 4-րդ ենթակետը՝ որոշվեց «Լոկատոր» ՍՊԸ-ին առաջարկել ծանուցման պահից 3 աշխատանքային օրվա (վերջնաժամկետ 12.12.18թ. ժամը 18:00) ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

8. ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 19-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցման ներկայացման մասին

(Ծ.Սարգսյան)

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 19-րդ կետի 3-րդ ենթակետը՝

որոշվեց ՀՀ ԿԱ ՊԵԿ հարցում ներկայացնել «ՀՀ ԱՆ ԷԱՃԾՁԲ-2019/3» ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից «Լոկատոր» ՓԲԸ-ի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև հայտը ներկայացվելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը ներկայացված գնային առաջարկից պակաս չլինելու և հայտը ներկայացվելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը ակտիվների հաշվեկշռային արժեքին չգերազանցելու մասին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

9. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ծ.Սարգսյան)

«ՀՀ ԱՆ ԷԱՃԾՁԲ-2019/3» ծածկագրով գնման ընթացակարգի հաջորդ նիստը տեղի կունենա Կառավարական թիվ 3 շենքում, փոքր դահլիճում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից պահանջվող փաստաթղթերը ներկայացնելուց հետո:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Ծ.Սարգսյան

Անդամներ՝ ---------- Մ.Մխիթարյան

---------- Հ.Սարգսյան

Քարտուղար՝ ---------- Հ. Մնացականյան